



86. ԴԱՐԴԵՆ ՆՀԵՏ ԴԱՐՄԱՆՆ ԷԼ ԿԱ

Մին մարթ շատ փիա հիվանդ ա ինո՛ւմ: Էլ դոխտուր շի թո-
ղում, հրցընում ա, վրեչ մինն էլլա կարում շի ճար անե: Քյինամ
ա մին լողմանու կոշտ, նա յիլ ասում ա, թա ճար շի կա: Էտ
մարթը ետ ա տընոնում, թա քյինա տոն: Մայիս ամսն ա ինո՛ւմ,
հղեննի թոռ ա կյամ: Տա նի յա մըննում մին կարան, եշում,
տընանում կըրանեն ըռաշին մին կորու շանաղ վրեր ինգյած, սե-
լին ճիրավը լիգլը: Մին երմար օց կյամ ա էտ ճիրան խմում, ա-
ղուն մաշին վրեր ածում, քյինամ: Էտ մարթը մտածում ա, ասում
վրեր լողմանին էլ ճար չըրավ, էլ ես հինշու հետե՞ լըմ ապրում,
քյինամ էն շընաղեն ճո՛րը խըմեմ, մընոնեմ-պրծնեմ: Մուտա-
նում ա շանաղը յոր օնում, կլի՜ն քաշում ճո՛րը խմում, լո՛ւվա-
նում:

Մին քանի վախտան ետը տա քյինամ ա էն լողմանուն կոշ-
տը, թա՛ պա տու ասալ ըս լո՛ւվըննական շըս, խե՛ լո՛ւվացի: Լող-
մանին թա՛ ես մայիս ամսն սելը, կորուն շանաղը, մինգյել եր-
մար օցեն լղեն հիշտըղա՞ն քթինի քեզ տի խմիր, վրեր լո՛ւվանաս:
Ասե, տընանամ տու հիշտըղա՞ն ըս քթալ: Էտ մարթը նաղլ ա ա-
նում, թա հոնց ա տահանց պտահալ, խմալ, լո՛ւվացալ:

